

**Ինստիտուցիոնալ վերափոխումները Հայաստանի
Հանրապետության բնական մենաշնորհի համակարգում**

Սողոմոնյան Մ.Է.

*ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով,
Հայաստանի ազգային ագրարային համալսարան (Հայաստան, Երևան)
mikayelsoghomonyan@mail.ru*

Վճռորոշ բառեր՝ ինստիտուցիոնալ կառավարում, բնական մենաշնորհ, ինստիտուտներ, սեփականաշնորհում, հարկեր, օտարերկրյա ներդրումներ, հանրային ծառայություններ

***Институциональные преобразования в системе естественной монополии
Республики Армения***

Согомонян М.Э.

*Комиссия по регулированию общественных услуг Республики Армения,
Национальный аграрный университет Армении (Армения, Ереван)
mikayelsoghomonyan@mail.ru*

Резюме: В статье основное внимание уделяется вопросам институциональной трансформации обеспечения перехода от планируемой экономической системы к рыночной экономики, особенно в области естественных монополий, которая наиболее востребована, поскольку действующие в этой сфере институты управления прежней экономической системы практически не существуют в новых условиях. В этом контексте автор уделяет особое внимание вопросам трансформации частной собственности и законодательной базы, без которых улучшение не может цивилизованным способом обеспечить функционирование налоговой системы и привлечение иностранных инвестиций. Основываясь на общем анализе статьи, сделаны некоторые рекомендации, которые могут способствовать повышению эффективности деятельности в области естественных монополий.

Ключевые слова: институциональное управление, естественная монополия, институты, приватизация, налоги, иностранные инвестиции, общественные услуги.

Institutional Transformations in the System of Natural Monopoly of the Republic of Armenia

Soghomonyan M.E.

*The public services regulatory commission of the Republic of Armenia,
The Armenian National Agrarian University (Armenia, Yerevan)
mikayelsoghomonyan@mail.ru*

Abstract: The article focuses on the issues of institutional transformation ensuring the transition from a planned economic system to a market economy, especially in the field of natural monopolies, which is most in demand, since the institutions of administration of the former economic system operating in this sphere practically do not exist in the new conditions. In this context, the author pays special attention to the transformation of private property and the legislative framework, without which improvement can not, in a civilized way, ensure the functioning of the tax system and attract foreign investment. Based on the general analysis of the article, some recommendations have been made that can contribute to increasing the efficiency of activities in the field of natural monopolies.

Keywords: institutional governance, natural monopoly, institutions, privatization, taxes, foreign investment, public services.

Նոր տնտեսական համակարգին անցնելու գործընթացում Հայաստանում անհրաժեշտություն առաջացավ իրականացնել ինստիտուցիոնալ վերափոխումներ, որպեսզի տնտեսավարող սուբյեկտները ձեռք բերեն տնտեսական ազատություն, ինքնուրույնություն և հնարավորություն ունենան բարձրացնելու ամբողջ տնտեսության արդյունավետությունը:

Ընդհանուր առմամբ, ինստիտուցիոնալ վերափոխումները պետք է իրականացվեն հաշվի առնելով երկրի տնտեսական զարգացման շահերը, այն համապատասխանի ազգային առանձնահատկություններին և նպաստի սահուն կերպով անցնելու մեկ տնտեսական համակարգից մյուսին, կամ էլ հին բազայի վրա ստեղծել նորը: Նոր ինստիտուտների ներ-

դրումը կարող է խզել կապերը նախկինում գործող ինստիտուտների միջև, ընդ որում ինչքան շատ լինեն ոչ ֆորմալ կարգավիճակ ունեցող կառույցներ, այնքան արդյունավետ կլինի նոր ինստիտուտների ներդրման գործընթացը: Դրանք կարող են իրականացվել հետևյալ ճանապարհով՝

- ինստիտուտների ներդրում զարգացած երկրների օրինակով,

- նախկինում գործող ինստիտուտների բազայի վրա, որոնք ձևավորվել են պատմականորեն հասարակության զարգացմանը զուգընթաց,

- ինստիտուտների ներդրում այլ երկրների պատմական փորձի հիման վրա,

- ինստիտուտների ներդրում, որը կարող է իրականացվել դեղուկցիայի մեթոդով՝ «տեսությունից դեպի պրակտիկա» մեթոդի կիրառումով:

Նշված ուղիներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունը և երկրի ղեկավարությունն ընտրում է առավել արդյունավետը:

Հարկ է նշել, որ ներդրման հիշատակված մեթոդներից առավել տարածվածը զարգացած երկրների փորձի կիրառությունն է: Այդ մեթոդի առավելությունն այն է, որ առկա են ինստիտուտների ընտրության լայն տարբերակներ, քանի որ այլընտրանքային մոդելները շատ են, դրանք որոշակի ժամանակաշրջանում ենթարկվել են փորձարկումների, ապացուցել են իրենց առավելություններն ու թերությունները, ինչն էլ հնարավորություն է տալիս խոսել դրանց օգտագործման նպատակահարմարության մասին:

Հայաստանի Հանրապետությունում ինստիտուտները հիմնականում ներդրվել են ելնելով հատկապես զարգացած երկրների փորձից, որը ներկայումս համարվում է առավել արդյունավետ, քանզի բացի վերը նշված առավելություններից հնարավորություն է տալիս նվազեցնել ներդրման սոցիալական ծախսերը և ստանալ խորհրդատվություններ ներդրման գործընթացում առաջացող հարցերի վերաբերյալ: Ինչպես մնացած պոստսոցիալիստական երկրներում, այնպես էլ ՀՀ-ում անհրաժեշտություն առաջացավ ընդունել նոր սահմանադրություն, նոր օրենքների և նորմատիվ ակտերի ներդրում՝ ուղղորդված տնտեսական գործունեության կարգավորմանը: Շուկայական

ինստիտուցիոնալ համակարգի հիմնատարներն են.

1. Մասնավոր սեփականությունը,
2. Ձեռներեցությունը և ընտրության ազատությունը,
3. Մրցակցային հարաբերությունները,
4. Գների ազատականացումը,
5. Կառավարության գործունեության ոլորտները:

Շուկայական տնտեսական համակարգին անցնելուց հետո պետության համար նպատակահարմար չէ շուկայի բոլոր ոլորտների հանդեպ հսկողության իրականացումը, որտեղ ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացման և մրցակցության զարգացման լավագույն ձևը դառնում է սեփականության իրավունքի ապապետականացումը, հիմնականում մասնավոր սեփականության ինստիտուտի ձևավորման շնորհիվ:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ լինում են դեպքեր, երբ ինստիտուցիոնալ վերափոխումների գործընթացի օրենսդրական բազան ցուցաբերում է անճարակություն՝ ապահովել տնտեսության զարգացման իրավական հիմքի նորմալ գործունեություն: Դա բացատրվում է առաջին հերթին անհրաժեշտ ինստիտուտների թերզարգացվածությամբ և երկրորդ, ռեսուրսների ռացիոնալ բաշխման պայմանների բացակայությամբ: Հետևաբար անհրաժեշտ է ստեղծել հատուկ կառուցակարգեր, որոնք կարողանային ստիպել տընտեսվարող սուբյեկտներին գործել ներդրման ինստիտուտների կանոններին համաձայն և սեփականաշնորհման գործընթացում խուսափել խնդիրներից:

Ինստիտուցիոնալ ներդրման գործընթացը պահանջում է իրականացնել համալիր միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝

- օրենսդրական բազայի ստեղծում (իրավական ինստիտուտների ստեղծում): Համապատասխան օրենքների, նորմատիվ ակտերի, ծրագրերի ընդունումը և սոցիալ-տնտեսական անհրաժեշտության դեպքում վերափոխումները ապահովում են ինստիտուտների ներդրման արդյունավետությունը¹,

- պետական գույքի մասնավորեցման գործընթացի հանդեպ վերահսկողության ապա-

¹ Бостанджян В., Экономические преобразования в РА и проблемы их законодательного обеспечения, Ереван, "Экономика", N 4, 1999, с. 28

հովման համար կազմակերպչական համալիր միջոցառումների իրականացում՝ կարգավորող մարմինների ստեղծման միջոցով,

- բարձրորակ կադրերի պատրաստում, որոնք կարող են արագ, արդյունավետ և բարձր արհեստավարժ մակարդակով ընդունել կառավարչական որոշումներ,

- մասնավոր սեփականության հանդեպ բարոյա-հոգեբանական մեթոդների կիրառման միջոցով հասարակական կարծիքի ձևավորում: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ դա իրականացվում է զանգվածային լրատվական միջոցների օգնությամբ:

Ինստիտուտների ներդրման գործընթացում գործնականում ամենաբարդ հարցը մնում է բնակչության տարբեր սոցիալական խմբերի շահերի հաշվի առնելը, ինչի պատճառով կարգավորող մարմինների միջև հաճախ ծագում են հակասական մոտեցումներ:

Այստեղ մասնավորեցման գործընթացը դիտարկվում է ոչ միայն որպես պետական ձեռնարկությունների փոխանցում մասնավոր հաստիքներին, այլ որպես շուկայական հարաբերությունների հետագա զարգացման ինստիտուցիոնալ նախադրյալների ստեղծում:

ՀՀ-ում պետական ինստիտուցիոնալ և մասնավոր կառույցների անբավարար վիճակը խոչընդոտում է երկրի տնտեսության զարգացմանը: Կարգավորման ինստիտուտների բացակայության և (կամ) էլ դրանց ցածր արդյունավետության պատճառով, երբեմն պետական կառույցների միջև փոխհարաբերություններն այնքան են սրվում, որ ոչ ֆորմալ նորմերը փոխարինում են պաշտոնական նորմերին, իսկ գործող օրենքներն ու նորմատիվները հակադրվում են իրար, առաջացնելով անորոշության վիճակը պետական տարբեր կառույցների միջև:

Արդյունավետ ինստիտուցիոնալ ինստիտուտի ներդրման կարիք ունի հարկային համակարգը: Այն մեր երկրում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ընդունվեց ուշացումով (1997թ.), ինչն էլ խառնաշփոթություն ստեղծեց այդ հույժ կարևոր կառույցի ժամանակին ներդրման և արդյունավետ օգտագործման հարցում:

Հարկերի հավաքման ցուցանիշները նախկինում շատ ցածր էին (2004թ. ՀՆԱ-ի 13%, 2011-ին՝ 16%): Այն աստիճանաբար բարձրանում է, 2016-ին կազմել է 23,2%, սակայն դա

նույնպես անբավարար է, եթե հաշվի առնենք, որ առանձին երկրներում այդ ցուցանիշը տատանվում է 40-50%-ի միջակայքում և ինչքան մեծ է պետական հաստիքի ձեռնարկությունների շահույթի չափը, այնքան բարձր է լինում այդ ցուցանիշի մակարդակը:

Հարկային բեռի բաշխվածության համաչափության խախտման վրա ազդում է նաև հարկային վարչարարությունը, որը ոչ միանշանակ և ոչ միատեսակ է կիրառվում առանձին հարկ վճարողների հանդեպ: Հարկ վճարողների իրավական ու հանրային համակարգի պաշտպանությունը և հովանավորչությունը դեռևս չի գտնվում ցանկալի մակարդակի վրա: Առավելապես բացասական ազդեցություն է թողնում նաև հարկային դեկրետավորումը, որոնք չեն ուղղվում տնտեսության կոնկրետ ոլորտի զարգացմանը: Օրինակ, անհասկանալի է, ինչ տրամաբանությունից է բխում ազատել շահութահարկից 1 մլն. ԱՄՆ դոլարը գերազանցող օտարերկրյա կապիտալի կիրառումից, իսկ դա չտարածել տեղական կապիտալի օգտագործման վրա: Եթե մենք ցանկանում ենք ներգրավել ավելի շատ օտարերկրյա կապիտալ, ապա անհիմն է հարկել ոչ ռեզիդենտի շահաբաժինը (դիվիդենտը) կամ շահույթը, դրանցից ազատելով ռեզիդենտներին:

Յուրաքանչյուր երկրի կառավարության գործառնությունների մեջ են մտնում պարբերաբար իրականացնել ինստիտուցիոնալ վերափոխումներ, այդ համատեքստում օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ-երի) համար բարենպաստ միջավայր ստեղծել: 1995 թվականին ՕՈՒՆ-երի ներհոսքը ՀՀ-ում կազմել է 25, 2000-ին՝ 125, 2006-ին՝ 251, 2007-ին՝ 698,8, 2008-ին՝ 1001,1 մլն. ԱՄՆ դոլար: 2009-ից սկսել է նվազել՝ կազմելով 732,1, 2010-ին՝ 483 մլն.: Վերջին տարիներին ՀՀ գործակալների այլ երկրներում և այլ երկրների գործակալների Հայաստանում կատարած ներդրումների տարբերությունը եղել է բացասական²:

Սկսած 2009 թվականից գրանցվել է օտարերկրյա ներդրումների նվազում, ինչի մասին վկայում են աղյուսակի տվյալները:

Աղյուսակի տվյալները վկայում են, որ 2008-2017 թվականներին շեշտակիորեն նվազել են ինչպես ընդհանուր ներդրումներն,

² Տնտեսության պետական կարգավորում, Եր., ՏՆՏԵՍՍԳԵՏ, 2015, էջ 568

այնպես էլ ՕՈԻՆ-երը: Առաջին հայացքից դա կարելի է հիմնավորել 2009 թվականից սկսած ֆինանսատնտեսական ճգնաժամից:

Նշանակում է այս ուղղությամբ ՀՀ կառավարությունը զգալի անելիքներ ունի: Կառավարությունը պետք է ակտիվացնի իր գործունեությունը, վերացնի անորոշությունները, հստակեցնի այդ գործընթացում ընդգրկված յուրաքանչյուր մասնակցի պատասխանատվությունն ու գործառույթները, կատարելագործի ներդրումային միջավայրը, որը դեռևս Հայաստանում կայուն չէ:

Քանի որ ՀՀ-ն վարում է ազատ արժույթային քաղաքականություն, ապա հաճախ տեղի է ունենում հետևյալ իրողությունը՝ տեղական ծագում ունեցող շատ ներդրումներ հոսում են արտասահման, այնուհետև ձևակերպելով որպես օտարերկրյա ներդրում, վերադառնում են, ինչի արդյունքում Հայաստանում ստեղծված միջոցների մի մասը մնում է արտաքին շուկայում, մյուսը վերադառնում է արդեն օտարերկրյա ներդրման կարգավիճակով:³

Այս երևույթը ևս մեկ անգամ պահանջում է, որ ճիշտ չէ խտրականություն մտցնել օտարերկրյա և տեղական ներդրումների ընդգրկման, խթանման և օգտագործման հարցերում, օրենքը պետք է հավասարապես տարածվի և ներքին և արտաքին ներդրողների վրա:

Ներդրումների վրա կոնկրետ ազդեցություն է թողնում ինստիտուցիոնալ գործիքները, հատկապես ազատ մրցակցության ապահովման գործում: 2011 թվականին «Տնտեսական մրցակցության պետական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կատարվեցին ուշագրավ փոփոխություններ, խստացվեցին տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումներ նախատեսվող տուգանքների չափերը, որոնք տարածվում են տնտեսական մրցակցությունը սահմանափակողների, արգելողների, անբարեխիղճ մրցակցային գործողություն իրականացնող սուբյեկտների վրա:⁴

³ Կուրդիյան Գ., ՀՀ ներդրումային միջավայրը կարգավորող օրենսդրական դաշտը և դրա կատարելագործման հիմնախնդիրները: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրները: Պարբերական գիտական ժողովածու: Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ: Խմբ. խորհ. - Եր.: "ՕՐ-ԴԱՐ", 2015, գիրք 8, էջ 264-277:

⁴ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 200.12.15/30 (128), հոդված 36:

Հայաստանում ինստիտուցիոնալ պայմանների ապահովման գործում բացասական ազդեցություն են թողնում պետական կառավարման մարմինների անարդյունավետ գործունեությունը և կոռուպցիան: Համաձայն Հերիթիջ Ֆաունդեյշնի գնահատման, կաշառք ու ծանոթ-բարեկամ գործելաճը տարածված է պետական պաշտոնյաների շրջանում, ովքեր շատ հազվադեպ են պատժվում կամ ազատվում իրենց զբաղեցրած պաշտոններից: Դատական համակարգը անկախ և թափանցիկ չէ (Հերիթիջ Ֆաունդեյշն, 2016):⁵ Կոռուպցիոն ռիսկերը խոչընդոտում են օտարերկրյա ներդրումների ընդլայնմանը, այն հատկապես խոր արմատներ ունի հարկային, մաքսային և դատական համակարգում: Հակակոռուպցիոն միջոցառումները պետք է լինեն թիրախավորված, ինչը պահանջում է օրենսդրության և իրավական դաշտի կատարելագործում, աջակցող ինստիտուտների ստեղծում:

Հայաստանի Հանրապետության ինստիտուցիոնալ վերափոխումները պետք է ընդգրկեն նաև պայմանագրային հարաբերությունների ոլորտը, որտեղ պահանջվում է խելացի մտեցումներ, մանրագնին հետազոտություններ ու վերլուծություններ, քանզի նա չունի ընտրության լայն հնարավորություններ և տարբերակներ՝ կապված Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցության հետ:

Հայաստանը 2015թ. հունվարի 2-ից անդամակցելով ԵԱՏՄ-ին, սկսեց բախվել լրացուցիչ խնդիրների հետ, քանի որ մեզ մոտ հարկադրույքներն ավելի բարձր են, քան ՌԴ-ում, Բելառուսում և Ղազախստանում: Այս իրավիճակում, չնայած ՀՀ կառավարությունը խոստանում է օժանդակել ՓՄՁ-ներին, այդուհանդերձ օրենսդրական փոփոխությունները զգալիորեն մեծացնում են հարկային բյուրոկրատիան, ինչն էլ ներդրողների համար լրացուցիչ տնտեսական ռիսկեր է ստեղծում:

Հայաստանի Հանրապետությունում կարգավորման ինստիտուտների ներդրումն անհրաժեշտ է իրականացնել ինստիտուցիոնալ դաշտի համալիր վերլուծությունից հետո, որն այսօրվա վիճակով կարիք ունի առավել արդյունավետ կարգավորման: Հետագայում, առ-

⁵ Ագրոֆիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն "ICARF", ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ներդրումների և խթանման ուղիները, Երևան, 2017, էջ 14:

կա վիճակի վերլուծությունից և ինստիտուցիոնալ վերափոխումներ պահանջող գերակա ուղղությունների բացահայտումից հետո, անհրաժեշտ է կատարել նոր ինստիտուտների ներդրման փուլային աշխատանքներ: Ընդ որում, յուրաքանչյուր փուլում իրականացված միջոցառումներից հետո, անցանկալի գործոնների բացահայտման նպատակով, կարևորվում է կատարել տվյալ փուլի արդյունքների վերլուծություն:

Հատկապես կարևորվում է սկզբունքորեն ճիշտ ներկայացնել նոր ինստիտուտների առջև դրված խնդիրը, որպեսզի այդ գործընթացը հնարավոր լինի հասցնել իր տրամաբանական ավարտին և տալ ստացված արդյունքի հստակ գնահատական: Հիմնական խնդիրներից առաջին հերթին կարելի է մատնանշել օրենսդրությունում և տարբեր նորմատիվ ակտերում տեղ գտած անհամապատասխանություններից վերհանման ու հեռացման անհրաժեշտությունը: Նոր ինստիտուտների ներդրումը պետք է իրականացվի այն միջավայրում, որտեղ առկա են բավարար պայմաններ, նոր ինստիտուտների արդյունավետ գործընթացի ապահովման համար:

Այստեղ պետք է ի նկատի ունենալ, որ ինստիտուցիոնալ վերափոխումները չեն կարող տալ ակնթարթային արդյունքներ: Կարգավորման միջավայրում կայունության ապահովման գործընթացի իրականացման և նշանակալից արդյունքների գրանցման միջև միշտ էլ առկա է որոշակի ժամանակաշրջան, երբեմն տասնյակ տարիներ՝ կախված գործընթացի բարդությունից, առաջադրված նպատակներից, ինչպիսին պետք է լինի սպասվելիք արդյունքը և ինչքանով է արհեստավարժորեն կազմակերպված: Դրա հետ միասին երկրի ու հասարակության էվոլյուցիոն զարգացումները վեր են հանում ինստիտուտների հետագա զարգացման գերակա ուղղությունները, որոնք պահանջում են նոր ինստիտուտների ներդրում կամ հների փոխարինում: Բնականաբար տվյալ գործընթացը պահանջում է համապատասխան գործառնական ծախսերի իրականացում, ինչը կարճաժամկետ հատվածում կարող են չաճել, բայց կմնա կայուն նույն մակարդակի վրա:⁶

Անդրադառնալով բնական մենաշնորհների (հանրային ծառայությունների) ոլորտում ինստիտուցիոնալ վերափոխումների հիմնախնդիրն, հարկ ենք համարում նշել, որ նշված բնագավառում անցումը վարչափրամայական տնտեսական համակարգից շուկայականին, ուղեկցվեց բազմաթիվ կառուցվածքային փոփոխություններով: Եթե էներգետիկայի ոլորտը, օբյեկտիվ ու սուբյեկտիվ իրավիճակներից ելնելով, սկսած անցյալ դարի 90-ական թվականներից, հայտնվեց հանրային ուշադրության կիզակետում և մեծ ճիգերի արդյունքում, այդ թվում նաև ֆինանսական, կարողացավ հաղթահարել անցման շրջանի նախնական փուլը, (ինստիտուցիոնալ վերափոխումների և շուկայական ինստիտուտների ձևավորման գործում), սակայն մյուս ոլորտներում դա չիրականացվեց: Նախ, ձևավորման գործընթացը տևեց շատ երկար և այդ ոլորտների առջև ծառայած խնդիրները չստացան օպերատիվ ու արագ լուծում: Երկրորդ, մի շարք վերափոխումներ հիմնավորված չէին, որոշումների ընդունումը կրում էին ինքնաբերական բնույթ և հաշվի չի առնվել համակարգային մոտեցման առանձնահատկությունը, ինչն էլ բերեց ծանր հետևանքների:

Բնական մենաշնորհների ձեռնարկությունների անարդյունավետ կարգավորումը, մի կողմից կարելի է բացատրել շուկայական հարաբերությունների պայմաններում գործելու անճարակությունից (ելնելով նախորդ տնտեսական համակարգի իներցիոն մոտեցումներից), այսինքն ինստիտուցիոնալ վերափոխումների կազմակերպման մշակույթի չիմացությունից, շուկայական հարաբերությունների համապատասխան պահանջներից և ազգային շահերի պատասխանատվության բացակայությունից: Մյուս կողմից, պետական քաղաքականությունը կրել է ոչ արդյունավետ և համարժեք բնույթ, քանի որ պետական ուղղակի միջամտությունը կրում էր հաճախ ֆինանսական բնույթ, և հետագայում, ինչպես ցույց տվեց պրակտիկան, ընտրված ուղին նպաստում էր միայն ֆինանսական խնդիրների լուծմանը, այն էլ միայն ժամանակավոր:⁷ Արդյունքը ՀՀ-ում ավելի մեծ կլիներ, եթե

⁶ Зотов В.В., Проблемы институционального анализа российских предприятий / В.В. Зотов, В.Ф. Пресняков, В.О.

Розенталь // Экономическая наука современной России. - 2002, - N 3, с. 40-45

⁷ Бутиркин А.Я., Естественные монополии: Теория и проблемы регулирования. - М., Новый век, 2003, с. 96

պետությունը լրացուցիչ ճիգեր գործադրել օրենսդրական բազայի կատարելագործմանը, ինստիտուցիոնալ վերափոխումների իրականացմանը, կառավարման կադրերի աշխատանքի արդյունավետության բարձրացման խթանմանը և այլն: Եվ պատահական չէ, որ գնալով վատացավ հենց այդ ճյուղերի արտադրատնտեսական վիճակը, ինչը հանդիսանում է ուշացած վերափոխումների իրականացման արդյունք:

Թեև հանրային ծառայության ոլորտի բոլոր ճյուղերը համարվում են մարդկային կենսագործունեության ապահովման կարևորագույն բնագավառ, այդուհանդերձ, Հայաստանի բնական մենաշնորհի ճյուղերից ներկայումս առավել զարգացած և համեմատաբար բարձր արդյունավետությամբ է գործում էլեկտրաէներգետիկան:

Անցյալ տարիների փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է շարունակել ինստիտուցիոնալ վերափոխումների իրականացման գործընթացը, մասնավորապես բնական մենաշնորհների ոլորտում, սակայն առավել արագ և հավասարակշռված մոտեցմամբ: Ընդ որում շատ կարևոր է գործընթացը շարունակել հետևողականորեն, տվյալ ոլորտի կայուն զարգացման պահանջով, քանի որ առանց դրա ամբողջ համակարգը կարող է վատացնել իր գործունեության արդյունավետությանը:

Մեր կարծիքով, ռազմավարական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի բնական մենաշնորհի ոլորտը դիտարկել ոչ թե առանձին-առանձին, ինչպես ներկայումս կատարվում է ՀՀ-ում, այլ որպես միասնական համակարգ, որոնց տարրերը լրացնում են իրար: Նշանակում է ինստիտուցիոնալ վերափոխումները պետք է իրականացվեն ելնելով այդ սկզբունքից: Պետական մարմինների միջամտությունը բնական մենաշնորհի ձեռնարկությունների գործունեությանը պետք է լինեն հիմնավորված, արդարացված, հաշվի առնելով, որ այդ ձեռնարկությունների միջև առկա են սերտ կապեր, իսկ գոյություն ունեցող հիմնախնդիրները նման են իրար: Կարելի է ենթադրել, որ վերջին տարիներին իրականացված ներդրումային և ինստիտուցիոնալ ծրագրերի արդյունքները զգալի բարձր կլինեն, եթե ի սկզբանե դրանք դիտարկվեին որպես միասնական համակարգ՝ հաշվի առնելով

բնապահպանական և տարածաշրջանային զարգացման խնդիրները:

Ամփոփելով բնական մենաշնորհի ոլորտում ինստիտուցիոնալ վերափոխումների վերլուծությունը, հանգում ենք նրան, որ այդ ոլորտի հիմնական առանցքը հանդիսացող էներգետիկայի ճյուղը ներկայումս կարիք ունի որոշակի վերափոխումների: Բավական է նշել, որ էներգետիկայի մասին ՀՀ օրենքը գործում է 2001 թվականից, իսկ էլեկտրաէներգետիկայի շուկայի կիրառվող մոդելը ուժի մեջ է մտել 2004-ին, ինչի հիմքում ընկած է միակ գնորդ-վաճառող, աշխարհում գրեթե իր ուժը կորցրած էլեկտրաէներգիայի շուկայի մոդելը: Այդ մոդելով, էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին է վերապահվում մեծածախ քանակով արտադրողներից գնել և մանրածախ գներով սպառողներին վաճառել էլեկտրաէներգիան, միաժամանակ այդ իրավունքը տարածելով արտահանման ու ներմուծման շուկաների վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն "ICARF", ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ներդրումների և խթանման ուղիները, Երևան, 2017, 52 էջ
2. Կուրդինյան Գ., ՀՀ ներդրումային միջավայրը կարգավորող օրենսդրական դաշտը և դրա կատարելագործման հիմնախնդիրները: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրները: Պարբերական գիտական ժողովաձու: Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ: Խմբ. խորհ.-Եր.: "ՕՐ-ԴԱՐ", 2015, գիրք 8, 338 էջ
3. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2016 թվական, հասանելի է՝ [<http://www.armstat.am>]
4. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 200.12.15/30 (128), հասանելի է՝ [<http://www.arlis.am>]
5. Տնտեսության պետական կարգավորում, Եր., ՏՆՏԵՍԱԳԵՏ, 2015, 590 էջ
6. Бостанджян В., Экономические преобразования в РА и проблемы их законодательного обеспечения, Ереван, "Экономика", N 4, 1999, 96 с.
7. Бутиркин А.Я., Естественные монополии: Теория и проблемы регулирования.- М., Новый век, 2003, 148 с.
8. Зотов В.В., Проблемы институционального анализа российских предприятий / В.В. Зотов, В.Ф. Пресняков, В.О. Розенталь // Экономическая наука современной России. -2002, - N 3, с. 40-45